Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2004թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

2004թ. կարևորագույն արդյունքն է ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Միքայելյանի կազմած և հրատարակած «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913-1919թթ.)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (գերմաներեն լեզվով): Ժողովածուում զետեղված են գերմանական արխիվներից հայտնաբերած հայոց ցեղասպանությունը փաստող բազմաթիվ բնագիր փաստաթղթեր, որոնք շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Բազմավաստակ գիտնականի այս աշխատությունն անգնահատելի ներդրում է պատմագիտության մեջ և ունի խիստ արդիական, քաղաքական նշանակություն:

Ինստիտուտի ձեռքբերած նշանակալի արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող 21 գիտահետազոտական թեմաների գծով կատարված զգալի աշխատանքները, հրատարակած և հրատարակության հանձված մի շարք մենագրություններն ու ժողովածուները, տասնյակ գիտական հոդվածները և հրապարակումները, մասնակցությունը հանրապետական և միջազգային հայագիտական բազմաթիվ գիտաժողովներին:

Ինստիտուտի ձեռքբերած կարևորագույն արդյունքներից են հայոց պատմությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրված հիմնահարցերը, որոնցից շատերի վերաբերյալ հրատարակվել են արժեքավոր հոդվածներ և աշխատություններ: Լուրջ աշխատանքներ են ծավալվել Հայոց պատմության ակադեմիական նոր բազմահատորյակ ստեղծելու ուղղությամբ: Այն ունենալու է խիստ արդիական գիտաքաղաքական նշանակություն և պատահական չէ, որ աշխատանքը հովանավորվում է պետական հատուկ ծրագրով:

2004թ. Պատմության ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն արդյունքն է նաև «Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին» (ղեկ.՝ պ.գ.դ. Ա.Մելքոնյան) թեմայի շրջանակներում կազմակերպված գիտաժողովը, որին զեկուցումներով հանդես են եկել 30-ից ավել գիտնականներ, զեկուցումների ժողովածուն հրատարակության ընթացքում է, իսկ հիմնադրույթներն արդեն իսկ հրատարակվել են: Հայ և օտար բազմաբնույթ սկզբնաղբյուրների հարուստ հենքի, ինչպես նաև հարցին առնչվող բազմալեզու գրականության հիման վրա հայ պատմագրության մեջ առաջին անգամ կազմակերպվել է նման խոշոր հայագիտական գիտաժողով:

Նշված թեմատիկ խմբի շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Գ.Առաքելյանի ,,Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը 19-րդ դարում,, արժեքավոր աշխատությունը, որը նվիրված է նահանգի բնակչության բազմաբնույթ հիմնահարցերի ուսումնասիրությանը: Հայկական այդ տարածքը պատմական տարբեր

ժամանակաշրջաններում եղել և մնում է հայ ժողովրդի մի ստվար հատվածի մշտական հայրենիք-բնօրրանը:

«Հայկական հարցը, ցեղասպանությունը և Մեծ տերությունները» (ղեկ.՝պ.գ.դ. Ս.Ս.Ստեփանյան) թեմայի գծով գիտաշխատող, պ.գ.թ. Ա. Խոսրոևան հրատարակել է ,,Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ),, աշխատությունը: Մենագրության մեջ քննության է առնված ինչպես 1895-1896 թթ., այնպես էլ 1914-1918 թթ. թուրքական իշխանությունների կողմից ասորիների նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածների հետևողական քաղաքականությունը, որը մաս է կազմել ինչպես հայերի, այնպես էլ թուրքահպատակ մյուս քրիստոնյաների ցեղասպանության ընդհանուր համաթուրքական ծրագրին: Աշխատության փաստական հարուստ նյութն ու հեղինակի նորովի կատարած եզրահանգումները դառնում են ամուր կռվան Օսմանյան տերությունում քրիստոնյաների զանգվածային ոչնչացումները քողարկող և ժխտող թուրքական պաշտոնական քարոզչության դեմ:

Ինստիտուտի գիտական կյանքում կարևոր արդյունք է «Հայկական դիվիզիաները Հայրենական մեծ պատերազմում 1941-1945թթ.» (ղեկ.՝ պ.գ.դ. Կ.Հարությունյան) թեմայի շրջանակներում հրատարակված Կ.Հարությունյանի «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ.» և «Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ.)» ռուսերեն լեզվով արժեքավոր մենագրությունը, որոնցում ներկայացվում է հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, վեր են հանվել նոր արխիվային փաստեր, ճշտվել՝ հայ հերոսների և գեներալների թվաքանակը: Աշխատանքն ունի ինչպես գիտագործնական, այնպես էլ քաղաքական մեծ նշանակություն:

Ինստիտուտի ձեռքումներից է ինստիտուտի գիտական քարտուղար պ.գ.թ. Կ.Խաչատրյանի ,,Հայ ժողովրդի մեծ բարեկամը՝ Ն. Ի. Ռիժկով,, ռուսերեն լեզվով արժեքավոր աշխատությունը՝ նվիրված հայ ժողովրդի մեծ բարեկամ, ԽՍՀՄ կառավարության նախագահ (1985-1991թթ.) Նիկոլայ Իվանի Ռիժկովին, նրա անգնահատելի գործունեությանը ԽՄԿԿ Կենտկոմի հանձնաժողովի նախագահի պաշտոնում Հայաստանում Սպիտակի երկրաշարժի հետևանքները վերացնելու խնդրում: Արժեքավոր այդ աշխատությունում ներկայացվում և բարձր է գնահատվում նաև Ն. Ի. Ռիժկովի արգասաբեր գործունեությունը հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների ամրապնդման ու զարգացման գործում նաև հետխորհրդային տարիներին՝ մինչև մեր օրերը: Աշխատությունում առանձին բաժիններով զետեղված են նաև մեծ թվով արժեքավոր արխիվային փաստաթղթեր և նյութեր, ժամանակիցների հուշեր, որոնք վկայում են Հայաստանում Ն. Ի. Ռիժկովի անձնվեր

գործունեության մասին: Գրքում ցույց է տրվում նաև հայ ժողովրդի մեծ երախտագիտությունը դեպի Ն. Ի. Ռիժկովը:

2004թ. ինստիտուտի գիտխորհրդի և ղեկավարության ուշադրության կենտրոնում է մշտապես գտնվել աշխատանքը երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների հետ: Կազմակերպվել և անց է կացվել երիտասարդ գիտաշխատողների հերթական 29-րդ նստաշրջանը: Ինստիտուտը հրատարակել է Հայոց հին պատմության հիմնահարցերին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ուր զետեղված են շուրջ 30 հիմնադրույթներ:

Ինստիտուտի գիտաշխատողների կողմից 2004թ. հրատարակած մենագրությունների ցուցակը

1. Առաքելյան Գ., Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը 19-րդ դարում, Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,,
2. Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, (Հայագիտական գիտաժողովի նյութեր), Երևան, ,,Զանգակ 97,,
3. «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913-1919թթ.)», փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (գերմաներեն լեզվով) (Կազմող՝ Վ.Ա. Միքաելյան), Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,,
4. Хачатрян К. Г., Великий друг армянского народа-Н.И.Рыжков, Ереван, ,,Зангак97,,
5. Погосян В. А., Переворот 18 фрюктидора 5 года во Франциии, Ереван, ,,Нор-Дар,,
6. Мартиросян А., Мировые пути через Армению и Переднюю Азию по карте Пейтингера, Ереван, Эдит принт
7. Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր (անգլերեն լեզվով), Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,,
8. Խոսրոևա Ա., ,,Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ),,, Երևան, Հեղինակային հրատարակություն
9. Арутюнян К. А., Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945 гг.), Ереван, ,,Гитутюн,,

2004թ. ինստիտուտում իրականացված կառուցվածքային փոփոխության արդյունքում ինստիտուտում ս.թ. հունվարին հիմնվել է Մեսրոպ Սրբազան Աշճեանի անվան գրադարան, որի գույքը և արժեքավոր գրքերն ու նյութերը ինստիտուտին էր նվիրաբերել Մեսրոպ Սրբազանը:

Հայաստանում ՊԻ անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, և այլ գիտական միջոցառումները

Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
		ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
Գիտաժողով, նվիրված Սասունի 1904թ.հերոսամարտերի 100-ամյակին	ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 17-19.06.2004թ. Պատմության ինստիտուտ	120	-
Հայագիտական գիտաժողով, նվիրված Հայոց հին պատմության հիմնահարցերին	ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 13-15. 11. 2004թ. ՊԻ	150	-
Գիտխորհրդի ընդլայնված նիստ, նվիրված ակադ. Վ.Միքայելյանի 80-ամյակին	ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 6.12.2004թ. ՊԻ	105	-

ՊԻ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ-անդամ երկրներ, կատարած գործուղումները

Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
	Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
ԱՄՆ	2	1	-
Ռուսաստան	-	1	-
Վրաստան	-	-	1
Շվեդիա	1	-	-
Սիրիա	-	1	-
Անգլիա	-	1	-
Իրան	-	-	1

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ հիմնարկություններում

Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
	գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
Ռուսաստան	-	1	1
ԱՄՆ	-	2	2
Գերմանիա	-	-	1
Սիրիա	-	1	1
Վրաստան	-	-	4
Եգիպտոս	-	1	1
Լիբանան	-	-	2

ԳԱԱ գիտաշխատողների 2005թ. հրապարակումների ընդհանուր քանակը

Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումների թեզիսներ և այլն	
Հանր.	Արտասահմ.	Հանր.	Արտասահմ.	Հանր.	Արտաս.
9	-	-	-	127	23

Ասպիրանտների թվաքանակը

Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1. 01. 2005թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
ա)կ	ա)չկ	ա)կ	ա)չկ
2	3	4	5
8(-)	11(3)	3(-)	2(-)

ՊԻ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

Աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	ԳԱԱ ակադեմիկոսներ (այդ թվում կանայք)	Գիտության դոկտորներ (այդ թվում կանայք)	Գիտության թեկնած. (այդ թվում կանայք)
3	4	5	6	7
129(53)	105(30)	5(-)	29(2)	56(18)

Մասնագիտացված գիտական խորհուրդների աշխատանքները

Մասնագիտությունը	Պաշտպանությունների թիվը			
	Ինստիտուտի աշխատակիցների կողմից		Ինստիտուտից դուրս հայցողների կողմից	
	դոկտ.	թեկնած.	դոկտ.	թեկնած.
Հայոց պատմություն և պատմագրություն	1	3	-	12

Պատմության ինստիտուտի տնօրեն,

պատմական գիտությունների դոկտոր Ա.Ա.Մելքոնյան